Հավելված N 3
ՀՀ կառավարության 2025 թվականի
հունվարի 16-ի N 47-Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ կառավարության 2014 թվականի
դեկտեմբերի 18-ի N 1420-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՖՈՆԴԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ

1. Պետական մարմինների՝ մարդկային ռեսուրսների պահպանման ծախսերի արդյունավետությունը գնահատելու և դրա հիման վրա վարձատրության քաղաքականության բարելավման միջոցառումներ մշակելու նպատակով պետական մարմիններում վարձատրության քաղաքականությունը մշակող լիազոր մարմինը (այսուհետ՝ լիազոր մարմին) յուրաքանչյուր տարի իրականացնում է պետական մարմիններին հատկացված աշխատավարձի, պարգևատրման ֆոնդերի վերլուծություն:

2. Պետական մարմիններին հատկացված աշխատավարձի, պարգևատրման ֆոնդերի վերլուծությունը ֆինանսների ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը կիրառում է պետական մարմինների աշխատավարձի ծախսերի պլանավորման և վերահսկողության նպատակով:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1420-Ն որոշման 2-րդ կետով սահմանված կարգով տրամադրված տեղեկատվության վերլուծության արդյունքում լիազոր մարմինը հաշվարկում և (կամ) գնահատում է պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված փորձագետներին, քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց աշխատավարձի, պարգևատրման ֆոնդերից տրված վարձատրությունը՝ ըստ հետևյալ տեսակների.

1) հիմնական և լրացուցիչ աշխատավարձի վճարմանն ուղղված միջոցներ, որից՝

ա. աշխատավարձի ֆոնդից հիմնական աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի) վճարմանն ուղղված միջոցների չափը,

բ. աշխատավարձի ֆոնդից լրացուցիչ աշխատավարձի վճարմանն ուղղված ընդհանուր միջոցների չափը, ըստ լրացուցիչ աշխատավարձի տեսակների.

2) պարգևատրմանն ուղղված միջոցների չափը, որից՝

ա. աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից պարգևատրմանն ուղղված միջոցների ընդհանուր չափը, պարգևատրում ստացած աշխատողների թիվը՝ ըստ պաշտոնների տեսակների, պարգևատրման միջին չափը,

բ. կատարողականի կամ հաշվետվության հիման վրա պարգևատրմանն ուղղված միջոցների ընդհանուր չափը և պարգևատրված պետական ծառայողների թիվը,

գ. օրենքով չարգելված այլ աղբյուրներից պարգևատրմանն ուղղված միջոցների չափը, պարգևատրում ստացած անձանց թիվը և պարգևատրման միջին չափը,

դ. աշխատանքների փորձարարական կազմակերպման համար օպտիմալացված միջոցներից պարգևատրմանն ուղղված միջոցների չափը, պարգևատրում ստացած քաղաքացիական ծառայողների թիվը և պարգևատրման միջին չափը.

3) արձակուրդների վճարմանն ուղղված միջոցների չափը, որից՝

ա. ամենամյա արձակուրդի վճարմանն ուղղված միջոցների չափը,

բ. լրացուցիչ միանվագ արձակուրդային վճարին ուղղված միջոցների չափը,

գ. ուսումնական արձակուրդի վճարմանն ուղղված միջոցների չափը,

դ. պետական կամ հասարակական պարտականությունների կատարման համար տրամադրվող արձակուրդի վճարմանն ուղղված միջոցների չափը և այդ արձակուրդից օգտված անձանց թիվը,

ե. հայրության արձակուրդի վճարմանն ուղղված միջոցների չափը և այդ արձակուրդից օգտված անձանց թիվը.

4) վերջնահաշվարկին ուղղված միջոցների չափը, որից՝

ա. չօգտագործած արձակուրդի հատուցման վճարմանն ուղղված միջոցների չափը և հատուցում ստացած անձանց թիվը,

բ. արձակման նպաստի վճարմանն ուղղված միջոցների չափը և արձակման նպաստ ստացած անձանց թիվը.

5) կադրերի ռեզերվում գտնվելու ընթացքում պետական ծառայողների վարձատրությանն ուղղված միջոցների չափը և այդ անձանց թիվը.

6) այլ հատուցումների վճարմանն ուղղված միջոցների չափը, որից՝

ա. հարկադիր պարապուրդի համար հատուցմանն ուղղված միջոցների չափը և այդ անձանց թիվը,

բ. մեղադրյալի կարգավիճակ ունեցողին տրվող հատուցումների վճարմանն ուղղված միջոցների չափը և այդ անձանց թիվը,

գ. դատական կարգով արդարացվածին կամ ռեաբիլիտացնող այլ հիմքով տրվող հատուցումների վճարմանն ուղղված միջոցների չափը և այդ անձանց թիվը.

7) սոցիալական այլ երաշխիքների վճարմանն ուղղված միջոցները, որից՝

ա. դրամական օգնությունների վճարմանն ուղղված միջոցների չափը և դրամական օգնություն ստացած անձանց թիվը,

բ. ժամանակավոր անաշխատունակության նպաստի վճարմանն ուղղված միջոցների չափը և ժամանակավոր անաշխատունակության նպաստ ստացած անձանց թիվը,

գ. մայրության նպաստի վճարմանն ուղղված միջոցների չափը և մայրության նպաստ ստացած անձանց թիվը:

4. Սույն կարգի 3-րդ կետով սահմանված ցուցանիշների վերաբերյալ ամփոփ գնահատումները լիազոր մարմինը ներկայացնում է ըստ յուրաքանչյուր պետական մարմնի, ըստ պետական ծառայության ամբողջ համակարգի և պետական ծառայության առանձին տեսակների Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1420-Ն որոշման N 1 հավելվածով նախատեսված զեկույցում:

5. Սույն կարգի 3-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «բ», 2-րդ ենթակետի «ա» և «գ», 3-րդ ենթակետի «ա», «գ», «դ», «ե» պարբերություններով, 4-րդ և 6-րդ ենթակետերով, 7-րդ ենթակետի «բ» և «գ» պարբերություններով սահմանված ցուցանիշները լիազոր մարմինը հաշվարկում և գնահատում է պետական պաշտոն

և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված փորձագետների, քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց համար ըստ պաշտոնների և զբաղմունքների տեսակի։»։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

16.01.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ